ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 21-Ա

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 03-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Բերդ համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Բերդ համայնքի ավագանու 2019թվականի փետրվարի 25-Ի <<Բերդ համայնքի 2019 թվականի տեղական բյուջեն հաստատելու մասին>> N 11-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

   /Զեկ.Կ.Սարգսյան/

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը անհատույց օգտագործման տարածք տրամադրելու մասին:

   /Զեկ.Հ.Մանուչարյան/

3. ՀՀ 2019 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով <<Բերդ համայնքի Նորաշեն-Մովսես 7.5 կմ ճանապարհահատվածի ասֆալտապատում>> ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը հաստատելումասին:

   /Զեկ.Հ.Մանուչարյան/

4. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի վարչական սահմանում գտնվող և որպես «ԱՆՀԱՅՏ» քաղաքացու սեփականություն փոխանցված գյուղատնտեսական նշանակության վարելահողերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

   /Զեկ.Վ.Գրիգորյան/

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 22-Ն

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019թվականի ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի <<ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 11-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀօրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Բերդ համայնքի 2019 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերը ավելացնել՝ 3000.0 հազար դրամի չափով, և հաստատել.

ա) եկամուտների մասով 892797.2 հազար դրամ,
բ) ծախսերի մասով 1022507.2հազար դրամ,
գ) դեֆիցիտի ծածկմանն ուղղված միջոցներ 129710.0 հազար դրամ:

2.2019 թվականի բյուջեի եկամտային մասում՝ ,,Օրենքով և այլ իրավական ակտերով համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ,, խումբ 28 ենթախումբ 50 ավելացնել 3000.0հազար դրամով,համաձայն Բերդի համայնքապետարանի և Բերդի զբաղվածության տարածքային կենտրոնի միջև 27.03.2019թ. կնքված թիվ 1 և թիվ 2 պայմանագրերի:

3.2019 թվականի բյուջեի ծախսային մասում՝ ,,Վարձատրվող հասարակական աշխատանքներ,, խումբ 10, բաժին 05, ծրագիր 01 ավելացնել 3000.0հազար դրամով, Բերդի և Մովսեսի համայնքային ճանապարհների ընթացիկ բարեկարգման համար:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՀԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 23-Ա

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և Տավուշի մարզպետարանին ներկայացնել հետևյալ երեք առաջարկությունները՝ Համալիր սոցիալական ծառայություններ իրականացնելու նպատակով.

1. Բերդ քաղաքի Լևոն Բեկի 10 շենքի 2-րդ հարկի մի մասը և 3-րդ հարկը վերանորոգել ու այնտեղ տեղակայել համայնքային գրադարանը, գրադարանի տեղափոխումից հետո 1-ին հարկը 365.5ք.մ և 2-րդ հարկից 190ք.մ տրամադրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:
2. Բերդ քաղաքի Լևոն Բեկի 9/1 հասցեում գտնվող նախկին դատարանի շենքը վերանորոգել և տրամադրել համայնքային գրադարանին, գրադարանի տեղափոխումից հետո Լևոն Բեկի 10 հասցեի շենքի 1-ին հարկը 365.5ք.մ և 2-րդ հարկից 190ք.մ տրամադրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:
3. Բերդ քաղաքի Լևոն Բեկի 5 հասցեի 1-ին հարկում տեղակայված Տավուշի զինվորական կոմիսարիատի Տավուշի բաժինը, որի հիմնական մասը տեղափոխվել է քաղաք Իջևան և Ազգային վիճակագրության կոմիտեի Բերդի տարածքային կենտրոնը տեղափոխել Լևոն Բեկի 10 շենք, նրանց համար ստեղծելով անհրաժեշտ պայմաններ:Տավուշի զինվորական կոմիսարիատի Տավուշի բաժնի և Ազգային վիճակագրության կոմիտեի Բերդի տարածքային կենտրոնի տեղափոխումից հետո Բերդ քաղաքի Լևոն Բեկի 5 հասցեի 1-ին հարկի նրանց զբաղեցրած տարածքը 378.69 ք.մ և 2-րդ հարկից 176.81 ք.մ տրամադրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -2

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

/ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

/ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

Համայնքի ղեկավար **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 24-Ա

ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ,,ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՇԵՆ-ՄՈՎՍԵՍ 7.5 ԿՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ,, ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1.ՀՀ 2019 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով հաստատել. <<Բերդ համայնքի Նորաշեն-Մովսես 7.5 կմ ճանապարհահատվածի ասֆալտապատում>> ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը:

2.Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2019թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներն նախատեսված է՝մինչև 25.000.000 ՀՀ դրամի չափով, ծրագիրը իրականցնելու և համայնքային ներդրում կատարելու համար:

3.Ուժը կորցրած ճանաչել Բերդ համայնքի ավագանու 2018թվականի օգոստոսի 16-ի թիվ 56-Ա որոշումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 25-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՎ ՈՐՊԵՍ «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի N 186-Ն հրամանի հավելվածի 9-րդ կետի 5-րդ ենթակետով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1.ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Բերդ քաղաքում գտնվող, որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն փոխանցված՝ 11-002-0237-0002, 11-002-0237-003, 11-002-0237-004, 11-002-0237-005 և 11-002-0237-0007 կադաստրային ծածկագրերի տակ գտնվող 0.48794 հա ընդհանուր մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող, գործառնական նշանակության հողամասերը, որոնց նկատմամբ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր՝ ճանաչել համայնքային սեփականություն:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

Համայնքի ղեկավար՝ **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**